

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
«ԵՐԵՎԱՆԻ Հ.104 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-Ի**



**ՏՆՕՐԵՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ ՆԱԻՐԱ ՀՐԱՆՏԻ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.....	14
1.1. Կրթական կարիքների նկարագրություն՝ պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխան:.....	25
1.2. Կրթական կարիքների նկարագրություն՝ հաստատության ենթակառուցվածքներին համապատասխան:.....	32
2. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ.....	36
3. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ:	48
3.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն:.....	48
3.2. Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն:	65
3.3. Ուսումնական հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն:	76
3.4. Հաստատության համագործակցությունը ՏԻ մարմինների, ծնողական համայնքի, աշակերտական համակազմի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ վերլուծություն:.....	89
3.5. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում, վերլուծություն.....	122:
3.6. Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների վերլուծության ներկայացում:	133
3.7. Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն: ...	136
3.8. Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն...	152
3.9. Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն:.....	154
3.10. Ուսումնական նպատակներով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից:.....	156
3.11. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր:.....	157
4. ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....	158

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ:.....159

ՀԱՎԵԼՎԱԾ



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Երևանի հ.104 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028 թվականների զարգացման ծրագրի մշակման համար հիմք է հանդիսացել ՀՀ Կրթության զարգացման պետական ծրագիրը՝ կրթության զարգացման տեսլականը, ռազմավարական մոտեցումները, կրթության զարգացման պետական քաղաքականության սկզբունքները, գերակայությունները, գործողությունների շրջանակը: Դպրոցի զարգացման ծրագիրը մի տեսանկյունից ներկայացնում է արդի ժամանակաշրջանի կրթական գերակայություններն ու ռազմավարական մոտեցումները, մյուս կողմից անցում է կատարում որակապես այլ ուսումնական հաստատության վերափոխման, որտեղ առավելագույնս պետք է իրացվեն կրթական գործընթացի բոլոր մասնակիցների պահանջմունքները:

Առաջնորդվելով վերածննդի դարաշրջանի Իտալիայում անտիկ փիլիսոփայության հայտնի գիտակ հումանիստ Վիտտորինո դա-Ֆելտրեի (1378-1446) մարդասիրական գաղափարներով՝ զարգացման ծրագիրը կազմել ենք հումանիստական մանկավարժության սկզբունքներին համապատասխան: Վ. Ֆելտրեն կազմակերպեց մի դպրոց, որն անվանեց «Խնդության տուն» : «Խնդության տունը» տեղավորված էր բնության գրկում, հիանալի պալատի մեջ: Ամբողջ պալատը Ֆելտրեի ցուցմունքով վերափոխված էր դպրոցի պահանջներին համաձայն: Այնտեղ առատ էին լույսն ու օդը: «Խնդության տանը» մեծ ուշադրություն էին դարձնում աշակերտների ֆիզիկական զարգացմանը, իսկ ուսումնական առարկաներն էին դասական լեզուներն ու դասական գրականությունը, մաթեմատիկան, աստղագիտությունը: Էքսկուրսիաներ էին կազմակերպվում

բնության գիրկ: Մեծ նշանակություն էին տրվում խաղերին, մարդու ֆիզիկական և հոգևոր ուժերի զարգացմանը: Ֆելտրեի հումանիստական գաղափարներն այսօր էլ արդիական են և կիրառելի:

Երևանի հ. 104 հիմնական դպրոցի 2023-2028 թվականների զարգացման ծրագրի նպատակն է դպրոցը դարձնել «Խնդրության տուն», որտեղ

- յուրաքանչյուր աշակերտ կզգա իրեն ապահով, անվտանգ, երջանիկ,
- կստանա իր պահանջմունքներին, նախասիրություններին, հնարավորություններին համապատասխան կրթություն, մանկավարժահոգեբանական աջակցություն, անձնակողմնորոշիչ դաստիարակություն,
- արդյունավետ և անվտանգ կանցկացնի իր ազատ ժամանակը,
- յուրաքանչյուր ուսուցիչ երեխային կդիտի որպես բարձրագույն արժեք,
- յուրաքանչյուր ուսուցիչ ավելի շատ կտա, կօգնի, կուղղորդի, քան կպահանջի,
- կիրականացնի անձնակողմնորոշիչ ուսումնադաստիարակչական գործընթաց,
- յուրաքանչյուր ուսուցիչ կունենա արժեքաբեկական պահանջմունքներ և դրանք բավարարելու շարժառիթներ,
- որտեղ վարչական անձնակազմը կդեկավարի և կվերահսկի ժողովրդավարական և գործընկերային ոճով,
- որտեղ ծնողները միայն չեն պահանջի, այլ կաջակցեն մանավարժներին և վարչական անձնակազմին սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու աշխատանքներում,
- և որտեղ կրթական գործընթացի բոլոր մասնակիցները՝ հատկապես մանկավարժները, կառաջնորդվեն հումանիստական մանկավարժության հետևյալ սկզբունքներով՝
- Հասկանալու սկզբունք/ Հույզերի, մանկավարժական մտածելակերպի շնորհիվ հասկանալ աշակերտի ներքնաշխարհը, անհատականությունը/:
- Ճանաչելու սկզբունք/Ճանաչել և ընդունել յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները, հաշվի առնել նրա կարծիքը, հայացքներն ու դիրքորոշումը, ընտրությունը: Չպարտադրել սեփական տեսակետը կամ կարծրատիպային վարքագիծ: Հավատալ երեխայի ուժերին և հնարավորություններին/:
- Ընդունելու սկզբունք/Ընդունել երեխային այնպիսին, ինչպիսին կա՝ նրա ինքնատիպությունը: Ընդունելով երեխային՝ ազդել նրա վրա՝ ապրումակցման, հասկացման և բարյացակամության շնորհիվ/:

Հումանիտական մանկավարժության հիմնախնդիրը աշակերտի գիտելիքների, աշխարհայացքի, սեփական ես-ի և արարքների ներդաշնակության ապահովումն է, իսկ նպատակը կյանքի, աշխարհի հանդեպ դրական վերաբերմունք ունեցող, սոցիումում և մշակութային կյանքում ազատ, խելամիտ և պատասխանատու ընտություն կատարող անձի ձևավորումն է: Հանրակրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը: Ուսումնական հաստատության՝ հիմնական դպրոցի զարգացման ծրագրում(այսուհետ ԴԶԾ) անդադարձել ենք սովորողի անձի զարգացման, սոցիալականացման գործոններին(ընտանիք, դպրոց, հասակակիցների խմբեր), պայմաններին, գործակալներին՝ (ծնող, ուսուցիչ, դասղեկ, հասակակիցներ, դասընկերներ):

ԴԶԾ-ի խնդիրներն են՝

- հանգամանորեն ներկայացնել ուսումնական հաստատության գործունեությունը,
- սահմանել հիմնական դպրոցի առաքելությունը,
- վերլուծել իրավիճակը, հնարավորությունները, ուժեղ և թույլ կողմերը,
- սահմանել առկա իրավիճակին և հնարավորություններին համապատասխան նպատակներ և խնդիրներ, դրանց հասնելու գործողություններ և միջոցառումներ,
- առաջարկել ԴԶԾ-ի իրականացման գործիքակազմ՝ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ,
- սահմանել վերջնարդյունքներ,
- նշանակել ԴԶԾ-ի կատարման պատասխանատուներ,
- բացահայտել ԴԶԾ-ի իրականացման ռիսկերը,
- սահմանել ԴԶԾ-ի իրականացման վերահսկողության մեխանիզմներ,
- մշակել ԴԶԾ-ի կատարման գործողությունների գնահատման չափանիշներ՝ ըստ առանձնահատկության:

ԴԶԾ-ն մշակելիս օգտվել ենք հետևյալ մեթոդներից՝ համապատասխան գրականության ուսումնասիրություն, վերլուծություն, համադրում, հարցաթերթիկ, մոդելավորում:

ԴԶԾ-ի կառուցվածքն ու ծավալը: ԴԶԾ-ն կառուցված է ներածությունից, թվով տասնմեկ բովանդակային բաժիններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ընդհանուր ծավալը՝

ԾՐԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԽ-աշակերտական խորհուրդ

ԱՊ-աշխատանքային պլան

ԼՄ-լիազոր մարմին

ԾԽ-ծնողական խորհուրդ

ԿԱՊԿ-կրթության առանձնահատուկ պայմանների կարիք

ԿՄ-կրթական միջավայր

ՀՄԿ-հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ՀՊԶ-հանարակրթական պետական չափորոշիչ

ՄԱԾ-մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ

ՆԴՎ-ներդպրոցական վերահսկողություն

ՇԽ-շրջանավարտների խորհուրդ

ՄԱ-մանկավարժական անձնակազմ

ՄԽ-մանկավարժական խորհուրդ

ՄԿԱ- մասնագիտացված կրթական աջակցություններ

ՄՄ-սոցիալական միջավայր

ՎՄ-վարչատնտեսական մաս

ՏՄԱԿ-տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն

ՏՏ –տնօրենի տեղակալ

ՈԻՕ-ուսուցչի օգնական

ՖՄ-ֆիզիկական միջավայր



ԴԶԾ-Ի ԱՆՁՆԱԳԻՐԸ

Ծրագրի անվանումը	«Երևանի հ. 104 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028թվականների զարգացման ծրագիր
Զարգացման ծրագրի շահառուները	<p>Կրթական գործընթացի մասնակիցները՝ 1) սովորողը.</p> <p>2) սովորողի ծնողը.</p> <p>3) ուսուցիչը և այլ մանկավարժական աշխատողներ.</p> <p>4) վարչական աշխատողները.</p> <p>5) խորհրդում և խորհրդակցական մարմիններում ընդգրկված՝ նախարարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները և այլ անձինք:</p>
Զարգացման ծրագրի օրենսդրական հիմքերը,	<p>Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն,</p> <p>«Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներ, «Հանրակրթական պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, Կրթության զարգացման պետական ծրագիր/մինչև 2030թ./, Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր</p>
Ծրագրի մշակողները	Ծրագրի մշակմանը մասնակցել են կրթական գործընթացի մասնակիցները/աշակերտները, ծնողները, ուսուցիչներն ու մանկավարժական աշխատողները, դպրոցի ոչ ուսուցչական անձնակազմը:
Ծրագրի կատարողները	Վարչական անձնակազմ, մանկավարժական, ծնողական, ԱԽ, ԾԽ, ՄԽ, ՇԽ, աշակերտական խորհուրդներ, համագործակցող կազմակերպություններ և սուբյեկտներ:

<p>Ծրագրի նպատակները</p>	<ul style="list-style-type: none"> • Սովորողների կրթական կարիքների բավարարումն է՝ պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխան: • Անհրաժեշտ պայանների ապահովմամբ յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացի կազմակերպումը, որը կապահովի աշակերտի մասնագիտական կողմնորոշումն ու սոցիալական առաջընթացը ժամանակակից աշխարհում՝ դարձնելով նրան մրցունակ: • Կրթական միջավայր- հասարակություն ինտերակտիվ փոխազդեցության համակարգի ստեղծումը՝ որպես ներդաշնակ, համակողմանիորեն զարգացած, քննադատական մտածողություն, ստեղծագործելու ունակություն, համագործակցելու կարողություն ունեցող և սոցիալական պատասխանատվությամբ օժտված հասարակության, պետության զարգացմանը նպաստող անձի ձևավորման գործիքակազմ:
<p>Ծրագրի խնդիրները</p>	<ul style="list-style-type: none"> • Ստեղծել զարգացնող կրթական միջավայր, որտեղ յուրաքանչյուր աշակերտ իր տարիքային, անհատական առանձնահատկություններին, հնարավորություններին, նախասիրություններին համապատասխան կստանա որակյալ հիմնական կրթություն՝ 21-րդ դարի կրթության մարտահրավերներին համապատասխան: • Ապահովել ՀՊԶ-ով սահմանված 8 առանցքային կարողունակությունների վրա հիմնված կրթություն: • Ապահովել սովորողների առավելագույն մասնակցություն

	<p>ուսումնադաստիարակչական գործընթացին:</p> <ul style="list-style-type: none"> • Կիրառել համընդհանուր ներառման գործընթացն արդյունավետ դարձնող նոր մոտեցումներ: • Բարձրացնել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների խմբի մասնագիտական գործունեության մակարդակը: • Աջակցել մանկավարժական աշխատողների շարունակական մասնագիտական առաջընթացին՝ ստեղծելով արժեքային արձանագրության պահանջմուքների բավարարման մոտիվացիա: • Մշակել մանկավարժական մտածելակերպի արդիակաացման և կատարելագործման ուղիներ: • Կիրառել կրթական գործընթացի մասնակիցների համագործակցության ժամանակակից ձևեր և տեխնոլոգիաներ: • Բարելավել դպրոցի կառավարման մասնակցային գործընթացը: • Ստեղծել անվտանգային միջավայր: • Արդիականացնել դպրոցի նյութատեխնիկական բազան: • Ստեղծել պայմաններ համակողմանիորեն զարգացած, պարտքի և պատասխանատվության զգացումով օժտված, մարդասեր, հայրենասեր, պետական մտածելակերպ ունեցող անձի դաստիարակության համար՝ բարեգործկամավորի մշակույթի ձևավորմամբ՝ հասարակական նախաձեռնությունների և նախագծերի միջոցով: • Արդիականացնել դպրոցականների արտադասարանական դաստիարակության և ժամանցի կազմակերպման ձևերն ու տեխնոլոգիաները: • Բարելավել ներդպրոցական վերահսկողության ձևերն ու մեթոդները:
--	--

	<ul style="list-style-type: none"> • Ստեղծել նոր ձևաչափով ծնողական համալսարան:
<p>Վերջնարդյունքները</p>	<ul style="list-style-type: none"> • Զարգացնող կրթական միջավայր: • Կրթության որակի բարելավում: • ՀՊԶ-ով սահմանված 8 կարողունակությունների ձևավորում: • Ուսումնառության ռազմավարությունների/մետաճանաչողության, ճանաչողության և սոցիալ-հուզական/ կիրառում: • Համատեղ դասավանդում: • Ուսումնառության համընդհանուր ձևավորման համակարգի կիրառում: • Քրուչինգի հիմնական կարգախոսի կիրառումը ուսուցչի օգնականների կողմից: • Ուսուցչի հատուկ կամ մասնագիտական, սոցիալական, աուտոհոգեբանական կոմպետենցիաների դրսևորում: • Ուսուցչի գնոստիկ, նախագծային, կառուցողական, կազմակերպչական, պերցեպտիվ, սուզեստիվ, հաղորդակցական, խոսքային, կրեատիվ, ակադեմիական, դիդակտիկ ունակությունների դրսևորում: • Մանկավարժական մտածելակերպի դրսևորում: • Մանկավարժի հուզական ինտելեկտի զարգացում: • «Մանագիտական այրման» համախոտանիշի բացառում: • Ուսուցիչների ստեղծագործականության, հետազոտական կարողությունների և ինքնակրթության պահանջմունքների դրսևորում: • Ուսուցիչ-աշակերտ համագործակցություն՝ կառուցված փոխադարձ վստահությամբ: • Ոչ ֆորմալ ծնող-ուսուցիչ, դպրոց-ընտանիք համագործակցություն/ժողովներ, դասղեկի ժամեր, սեմինարներ, կլոր սեղաններ, սպորտլանդիաներ, բանավեճեր, նախագծային աշխատանք.../ : • Կառավարման խորհուրդ-վարչական աշխատողներ համագործակցություն՝

	<p>փոխադարձ հարգանքի և վստահության հիման վրա, մասնակցային:</p> <ul style="list-style-type: none"> • Թափանցիկ կառավարում: • Խորհրդակցական մարմինների/ ՄԽ, ԱԽ, ԾԽ, ՄՄ, ՇԽ/ արդյունավետ համագործակցություն: • Անվտանգ միջավայրի ստեղծում: • Բարոհահոգեբանական նպաստավոր միջավայրի ստեղծում, մանիպուլացիաների բառացում: • Դպրոցի նյութատեխնիկական բազայի համալրում: • Սովորողների մտավոր զարգացման և դաստիարակվածության մակարդակի բարձրացում: • Կամավորական և բարեգործական աշխատանքներ կատարելու պահանջումքների դրսևորում/ուուցիչներ, աշակերտներ/: • Արտադասարանական դաստիարակության արդյունավետության բարձրացում/խմբակների, միջոցառումների, ակումբների արդյունավետ գործունեություն/: • Երկարօրյա ուսուցման բարելավում: • Դպրոցականների ազատ ժամանակի/ժամանցի/ արդյունավետ կազմակերպում: • Ներդպրոցական անցնցում, արդյունավետ և անընդհատ վերահսկողություն: • Ծնողական համալսարանի արդյունավետ գործունեություն: • ՏԻ մարմիններ-դպրոց մասնակցային, փոխշահավետ համագործակցություն:
<p>Ծրագրի կատարման ժամանակահատվածը</p>	<p>2023-2028թթ.</p>
<p>Ծրագրի կատարման փուլերը</p>	<p>Ծրագիրը կիրականացվի 01.12. 2023թվականից մինչև 01. 12. 2028 թվականը:</p> <p>1-ին փուլը` 2023թվականի դեկտեմբերից մինչև 2024 թվականի մարտ ամիսը ներառյալ`</p>

	<ul style="list-style-type: none"> • Վերլուծել նախորդ հնգամյա ծրագրի վերջնադյունքները: • Նախապատրաստել և ծրագրավորել ԴԶԾ-ի առաջիկա գործողությունները: • Իրականացնել աշխատանքի բաշում: • Համապատասխանեցնել դպրոցի կրթական համակարգը/ ուսումնադաստիարակչական գործընթացը/ ԴԶԾ-ում առաջադրված խնդիրների հետ և որոշակիացնել ծրագրի կատարման մշտադիտարկման մեխանիզմները: <p>2-րդ փուլը՝ 2024 ապրիլից մինչև 2026 թվականի ապրիլ ամիսը ներառյալ՝ ըստ ԴԶԾ-ում ներկայացված ժամանակացույցի:</p> <p>3-րդ փուլ՝ 2026 թվականի մայիսից մինչև 2028թվականի նոյեմբերը ներառյալ՝ ըստ ԴԶԾ-ում ներկայացված ժամանակացույցի: :</p>
<p><i>Ծրագրի կատարողականի ստուգումը</i></p>	<p>Ծրագրի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում է դպրոցի տնօրենի կողմից:</p> <p>Վերահսկվում և ըստ անհրաժեշտության՝ շտկվում են ԿԽ-ի, ՄԽ-ի, ԾԽ-ի, ՄՄ –ի, ՇԽ-ի, կողմից:</p> <p>Ամենամյա հաշվետվություններ են ներկայացվում ԿԽ-ում, ՄԽ-ում, ԾԽ-ում :</p>
<p><i>Ծրագրի հեղինակ՝</i></p>	<p>Նաիրա Հրանտի Մարտիրոսյան, մ.գ.թ., դոցենտ</p> <p>Ծնված՝ 29.05.1972թ., Էլ. հասցե mnaira72@mail.ru, mnaira72@gmail.com</p> <p>Martirosyannaira40@aspu.am</p> <p>Հեռ. 091357180, 093357180</p>



1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին

Հաստատության անվանումը, համարը՝ «Երևանի թիվ 104 հիմնական դպրոց», ՊՈԱԿ

Հաստատության հասցեն՝ Երևան, Ավան, Աճառյան 5

Հաստատության հեռախոսահամարը՝ 010-61-84-50, 010-61-17-10,

Հաստատության էլեկտրոնային հասցեն՝ school104@schools.am

Հաստատության պաշտոնական կայքի հասցեն՝ <http://yerevan104.schoolsite.am>

Սոցիալական հարթակ

<https://www.facebook.com/profile.php?id=100057160401542&mibextid=LQQJ4d>

Դպրոցի պատմությունը: «Երևանի թիվ 104 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հիմնադրվել է 1965 թվականին: Լինելով միջնակարգ դպրոց՝ դպրոցն իրականացրել է միջնակարգ/լրիվ/ ընդհանուր կրթական ծրագիր ծրագիր՝ 1-10-րդ դասարանների սովորողների համար: Դպրոցը եղել է միահերթ, վեցօրյա:

Ուսուցանվող օտար լեզուներն են եղել ռուսերենը և անգլերենը:

Դպրոցում գործել են նետաձգության, կերպարվեստի և ռուսաց լեզվի, պարի անվճար խմբակներ, երգչախումբ, երկարօրյա անվճար խմբակ:

Դպրոցն ունեցել է մարզադահլիճ, երաժշտության դասասենյակ, համակարգչային դասասենյակ, հանդիսությունների սրահ, ՆԶՊ-ի կաբինետ, լաբորատորիաներ, առարկայական դասասենյակներ: Ամառային արձակուրդներին գործել է բակային ճամբար: Դպրոցի տնօրեններն են եղել՝

1. Պողոս Մարգարյանը/1965-1974/,

2. Լենդրուշ Փարսադանյանը/1974-1978/,
3. Միմոն Միմոնյանը/1979-1985/,
4. Հովհաննես Մարտիրոսյանը/1985-1992/,
5. Հենրիկ Մինասյանը/1992-2012/,
6. Հակյանուշ Նիկոյանը/2012-2018/
7. Նաիրա Մարտիրոսյանը/2018-ից առ այսօր/:

Դպրոցում դասավանդել են մի շարք վաստակաշատ մանկավարժներ, որոնց կրթած սերունդներն իրենց ուրույն տեղն ու դերն են զբաղեցրել և ցայսօր էլ զբաղեցնում են հասարակության մեջ:

2005-2006 թթ. դպրոցը պետական միջոցների հաշվին հիմնանորոգվել է: Միջնակարգ դպրոցը 2007 թ. հունվարի 26-ին ստացել է հիմնական ընդհանուր կրթական գործունեություն իրականացնելու լիցենզիա, իսկ 2013 թ. նոյեմբերի 18-ին /N1309-Ա/Ք/ «Երևանի քաղաքապետարնի N104 միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Երևանի թիվ 104 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի:

Համաձայն ՀՀ ԿԳՆ նախարարի /այժմ ԿԳՄՍ/ դպրոցն իրականացրել և իրականացնում է հիմնական ընդհանուր կրթական ծրագիր՝ «584» սահմանային տեղով: ՀՀ ԿԳՄՍ նախարարի 25.01.2020թ 811-Ա/2 հրամանով տարրական հանրակրթական ծրագրով սովորողների համակազմի սահմանային «350» տեղը աշակերտների թվաքանակի ավելացման պատճառով փոխարինվել է 362 տեղով, իսկ 10.03.2021 թ. 350-Ա/2 հրամանով՝ «362 »տեղը»՝ «366» –ով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

№ 617

ՍՈՒՅՆՈՎ ՎԱԿԵՐԱՑՎՈՒՄ Է, ՈՐ

«*Էքտերակի փառափառապարտակի հ.104 միգրակարգ դպրոց*»
պարտակյան ոչ առեղծրուպիկ կապակակերպուրչյունը

թ. Էքտերակ, Ազյակ շր. Ահարյան փ. 5

ԻՐԱՎՈՒՄԷ ՈՒՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՑՆԵԼՈՒ

հիմնակյան ընդհանուր կրթուրչյան

ՈԼՈՐՏ(ՆԵՐ)ՈՒՄ, ՍՈՒՅՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՀՎԿԵԼՎԱԾՈՒՄ ՆԵՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻՆ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԵՎ
ՆՈՐՄԱՑՈՒՅՑԵՐԻՆ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ (ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ, ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ)
ՍԱՀԱՄԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱԶՄԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍՆԱՆ

ՆԱԿԱՐԱՐ՝

Լ. Ահարյան

Կ.Տ.

26 հունվարի 2007 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա

ՏԱՐՐԱԿԱՆ հանրակրթական
(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 1155

Սույնով վավերացվում է, որ
<<Երևանի թիվ 104 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ք. Երևան, Ավան, Շ. Աճառյան 5
(գտնվելու վայրը)

ք. Երևան, Ավան, Շ. Աճառյան 5
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Տարրական հանրակրթական
(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ
(ստորագրությունը)



Ա. Աշոտյան
(անունը, ազգանունը)

« 09 հունիսի 2014 » թ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

Ստորև ներկայացնում ենք 2018թ. նոյեմբերից մինչև 2023թ. նոյեմբեր ամիսը աշակերտների թվաքանակի դինամիկան՝ ըստ ուսումնական տարիների կիսամյակային և տարեվերջյան տվյալների : /Տե՛ս պատկեր 2/:

Պատկեր 2



ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՈՐԱԿԸ 2012-2018ԹԹ:

Պատկեր 3


**ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՈՐԱԿԸ՝
ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ**



ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ՝ 2018-2023ԹԹ.:

Պատկեր 4

**ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ՝
ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ
ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ**



ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՐԱԿԸ՝ 2018-2023ԹԹ.:

Պատկեր 5



Դպրոցն իրականացնում է ուսումնական պլանով նախատեսված 7 բնագավառների ուսուցում՝ ՀՊՁ-ով և առարկայական ծրագրերով : Դպրոցում սովորում է 701 աշակերտ:

«ԵՐԵՎԱՆԻ Հ.104 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎԸ՝ ԸՍՏ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

N	ԴԱՍԱՐԱՆ	ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎ	ԴԱՍՎԱՐ, ԴԱՍՂԵՎ
1	Iա	36	Մուրադյան Լուսինե
2	Iբ	28	Ստեփանյան Լալա
3	Iգ	25	Ահարոնյան Զարուհի
4	IIա	32	Սարգսյան Ռուզաննա
5	IIբ	35	Օհանյան Տաթևիկ
6	IIգ	27	Գյոզալյան Լիանա
7	IIIա	21	Դուրինյան Անահիտ
8	IIIբ	29	Սարգսյան Քնարիկ
9	IIIգ	24	Պապոյան Արփիինե
10	IIIդ	25	Ստեփանյան Լալա
11	IVա	32	Գրիգորյան Արմինե
12	IVբ	29	Մելիքյան Էվելինա
13	IVգ	24	Հովհաննիսյան Անի
14	Vա	31	Հովակիմյան Անահիտ

15	Vբ	23	Գրիգորյան Գայանե
16	Vգ	26	Կարանջանյան Էմմա
17	VIա	31	Բաղայան Նունե
18	VIբ	31	Փիլիպոսյան Նարինե
19	VIIա	30	Հակոբյան Աննա
20	VIIբ	30	Միքայելյան Սոնյա
21	VIIIա	34	Նավասարդյան Մարիամ
22	VIIIբ	29	Ավագյան Մարիամ
23	IXա	34	Թովիչյան Նունե
24	IXբ	35	Աթայան Անահիտ

Թվով 40 ուսուցիչ ըստ սահմանված կարգի՝ անցնում է պարտադիր ատեստավորում, որի շրջանակներում մասնակցում են վերապատրաստման դասընթացների: Ուսուցչի թափուր տեղերը համալրվում են ըստ սահմանված կարգի: Ուսուցիչների 90%-ը տիրապետում է S2S տեխնոլոգիաներին, դասավանդման ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին: Ուսուցիչներն իրենց ցանկությամբ ընդգրկվում են տարբեր վերապատրաստումների, մասնակցում համաժողովների: Առկա են ուսուցիչների առարկայական հաստատված թեմատիկ պլանները: Դպրոցում ձևավորվել է թվով 4 մեթոդական միավորում՝ տարրական կրթության, լեզուների, բնագիտական առարկաների, պատմական և գեղագիտական առարկաների մեթոդ միավորումներ, որոնք ունեն իրենց նախագահներն ու հաստատված աշխատանքային պլանները: Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացման պատասխանատուներն են տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը և տնօրենի՝ մասնագիտացված աջակցությունների գծով տեղակալը: Դպրոցի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է տնօրենը: Բոլոր վարչական աշխատողներն անցել են համապատասխան վերապատրաստումներ, առկա են հավաստագրեր: Դպրոցն իրականացնում է սովորողների բնութագրային գնահատում 1-2-րդ դասարաններում, միավորային գնահատում՝ 3-9-րդ դասարաններում: Իրականացնում ենք էլեկտրոնային մատենավարություն՝ համապատասխան մշտադիտարկմամբ, ներդպրոցական վերահսկողություն՝ ՆԴՎ գրաֆիկով, որտեղ հստակ նշված են առարկայական շաբաթները, թեմատիկ և համալիր ստուգման ձևերն ու ժամկետները: Դպրոցում իրականացվում է արտաքին և ամենամյա ներքին գնահատումներ՝ ըստ սահմանված կարգերի: Դպրոցն իրականացնում է հեռավար ուսուցում՝ ըստ անհրաժեշտության և սահմանված կարգի: Աշակերտները մասնակցում են առարկայական օլիմպիադաներին, միջազգային մրցույթներին, համայնքի և լիազոր մարմնի կողմից կազմակերպված բոլոր մրցույթներին, միջոցառումներին, միջազգային «Կենգուրու», «Մեղու» մրցույթներին: Կան

առաջին տեղ զբաղեցնողներ, օլիմպիադայի մարզային փուլ անցած աշակերտներ: 2-4-րդ դասարանների աշակերտներն ուսուցիչների հետ համատեղ նախագիծ են իրականացրել «Կրթության երախտավորները Մաշտոցից մինչև մեր օրեր» թեմայով՝ նվիրված Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 100 ամյակին: 9-րդ դասարանների աշակերտները մասնակցել են Մանկավարժության ամբիոնի կողմից կազմակերպված մանկավարժական օլիմպիադային՝ ստանալով հատուկ մրցանակներ: Ավանդույթ է դարձել ՀՊՄՀ-ի կողմից Երեխաների միջազգային օրվան՝ Հունիսի 1-ին նվիրված «Երեխան մարդ է և ընկեր» քարոզի մրցույթին մասնակցությունը, բարեկամական միջոցառումների կազմակերպումը ծերանոցներում, մանկատներում:

2019թ. -ի սեպտեմբերից դպրոցն իրականացնում է ներառական կրթություն: Ունենք թվով 20 կապկու երեխա: Դպրոցն ունի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների խումբ՝ հոգեբան, ուսուցչի օգնականներ, ովքեր իրենց իրավասությունների շրջանակներում մասնակցում են ԱՌԻՊ-ների մշակման, համակարգման, իրականացման աշխատանքներին, յուրաքանչյուր ամիս անցկացնում են նիստեր, ծնողհանդիպումներ, համագործակցում ՏՄԱԿ-ի, ՀՄԿ-ի հետ՝ կատարելագործելով իրենց գիտելիքներն ու կարողությունները: ՏՄԱԿ-ի և ՄԱԾ խմբի գործունեությունը մասնակցային է և փոխաջակցող, որից շահում է ԿԱՊԿՈՒ Երեխաների կրթական գործընթացը:


Դպրոցում գործում են արտադասարանական անվճար խմբակներ՝ երգի, ասմունքի, գրական, կերպարվեստի, և ուսումնական՝ շախմատի, կերպարվեստի խմբակներ, երգչախումբ՝ 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարանների աշակերտների համար:

Դպրոցն ունի վճարովի երկարօրյա ուսուցում, որն իրականացվում է ըստ սահմանված կարգի՝ ԿԽ որոշման համաձայն: Դպրոցն անընդմեջ կազմակերպում է թեմատիկ, ուղղորդող, ամփոփիչ, սոցիալ-կողմնորոշիչ, բարոյադաստիարաչական, մարմնամարզական, բնապահպանական միջոցառումներ, գրական ընթերցումներ, առարկայական շաբաթներ, ինտելեկտուալ մրցումներ, սպորտլանդիաներ, ֆլեշ-մոբեր և այլն:

/Տես՝ <https://www.facebook.com/profile.php?id=100057160401542&mibextid=LQQJ4d/>:

Դպրոցն ունի ՔՊ պլան, ԱՌՆ պլան, հակածխախոտային վահանակներ, 21 կրակմարիչներ, համապատասխան հակահրդեհային վահանակներ, տարհանման պլաններ. . .

Դպրոցում վարձակալական հիմունքներով գործում է Ամենագետ նախակրթարանը, Կարատեի և պարի խմբակներ:





Դպրոցը համագործակցում է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հետ, Համահամալսարանական մանկավարժության ամբիոնի հետ, Մասնագիտական կողմնորոշման կենտրոնի հետ, Ավան վարչական շրջանի Կրթության, մշակույթի, սպորտի բաժնի հետ, Ավանի Մշակույթի տուն ՀՈԱԿ-ի հետ, Հյուսիսային համալսարանի հետ: Դպրոցը համագործակցում է Ամրոց հիմնադրամի հետ՝ «Զարկ» ծրագրի շրջանակներում իրականացնելով ֆիզիկական և հայրենասիրական դաստիարակություն, «Հասարակական զարգացման և կրթական կենտրոն» ՀԿ-ի հետ, «Հույսի կամուրջ» ՀԿ-ի հետ, ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված «Teaching Academy» մանկավարժների վերապատրաստումներ իրականացնող կազմակերպության հետ, «Ինտերակտիվ կրթության զարգացում» հիմնադրամի հետ, «Pro paws» կենդանապաշտպան կազմակերպության, ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի հետ: Յուրաքանչյուր ուսումնական տարի դպրոցում շնորհալի, գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտներից մեկը/ընտրությունը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ/ ստանում է Իլյա Արցախեցու անվանական կրթաթոշակ:

1.1. Կրթական կարիքների նկարագրություն՝ պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխան:

Ըստ կրթության զարգացման պետական ծրագրի՝ կրթական համակարգի աշխատանքն ուղղված է ՀՀ քաղաքացիների, ինչպես նաև ՀՀ բնակվող, սակայն ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց կրթության իրավունքի լիարժեք իրացման ապահովմանը: Հայաստանում մարդկային կապիտալը դիտվում է որպես երկրի զարգացման հիմնական ռեսուրս, իսկ կրթությունը՝ մարդկային կապիտալի զարգացման որոշիչ գործոն: /ՀՀ Օ/16.11.2022թ/

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ/

Կրթության զարգացման տեսլականն է՝ յուրաքանչյուրն օժտված է որոշակի տաղանդով, և կրթության համակարգի առաքելությունն է բացահայտել և հնարավորինս զարգացնել յուրաքանչյուրի տաղանդը՝ ընդլայնելով իր երկրում սեփական բարեկեցությունն ապահովելու անհատի հնարավորությունները, որի երաշխավորը պետք է լինեն մրցունակ տնտեսությունն ու կայուն պետությունը:

Կրթության զարգացման գլխավոր նպատակն է ապագային միտված կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը լիարժեք ծառայում է ազգային շահերին, արտահայտում է կրթության համապատասխանությունը տնտեսության և հասարակության զարգացման ապագա ակնկալիքներին, յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տալիս կյանքի բոլոր փուլերում ստանալ իր պահանջմունքներին համապատասխան որակյալ կրթություն: Ըստ կրթության զարգացման պետական ծրագրի վերջնական նպատակի իրականացման /մինչև 2030 թ./ ռազմավարական երեք ուղղությունների՝ հանրակրթական դպրոցը պետք է ապահովի

- համընդհանուր ներառական սովորողակենտրոն և մասնակցային կրթական միջավայրի ստեղծում,
- կրթության արդյունավետության բարձրացում,
- Ռեսուրսների արդյունավետ ու նպատակային օգտագործում:

«Երևանի թիվ 104 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը սովորողների կրթությունը կազմակերպում է կրթության զարգացման պետական քաղաքականության սկզբունքներին համապատասխան՝

1. ժողովրդավարական մասնակցային մշակույթի ձևավորում,
2. աշակերտակենտրոն ուսուցում և դաստիարակություն,

3. դպրոցի ինքնավարության, կառավարման թափանցիկության, հաշվետվողականության հավասարակշռում,
4. կրթական գործընթացի բոլոր մասնակիցների՝ սովորողների, ծնողների, մանկավարժների, խորհրդակցական մարմինների պատասխանատվության առկայություն/ իրենց պարտականություններին համապատասխան/, ոչ ֆորմալ համագործակցություն,
5. համագործակցություն համայնքային և այլ հանրակրթական դպրոցների հետ,
6. համագործակցություն համայնքային արտադպրոցական հաստատությունների հետ,
7. ներառականություն և մասնակցայնություն ,
8. գերազանցության խրախուսում և այլն:

Հիմք ընդունելով վերոնշյալ սկզբունքները՝ «Երևանի թիվ 104 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը յուրաքանչյուր սովորողի կրթության իրավունքն իրացնում է ուսուցման և դաստիարակության հետևյալ սկզբունքներով՝

- գիտակցականության և ակտիվության սկզբունք,
- զննականության սկզբունք,
- համակարգվածության և հաջորդականության սկզբունք,
- մատչելիության սկզբունք,
- գիտականության սկզբունք,
- տեսականի և գործնականի կապի սկզբունք,
- տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառման սկզբունք,
- հասարակական ուղղվածության սկզբունք,
- կյանքի և աշխատանքի հետ կապի սկզբունք,
- դրականի վրա հենվելու սկզբունք,
- պահանջների միասնականության սկզբունք և այլն: :

Դպրոցն իր գործունեությունն իրականացրել և իրականացնելու է՝ հաշվի առնելով

համայնքի շահառու խմբերի կարիքներն ու հնարավորությունները: Համայնքի շահառուներն են համայնքի բոլոր բնակիչները՝ անհատից մինչև համայնքի յուրաքանչյուր աշխատակից, դեկավար:


Հիմնական դպրոցի կրթական կարիքներն են՝

1. Նախադպրոցական տարիքի երեխաներին դպրոցական կյանքի նախապատրաստումը:
2. Առաջին դասարանցիների դպրոց ընդունվելու հայտագրումը:
3. Դպրոցահասակ երեխաների դպրոց ընդունելությունը:
4. Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելը:
5. Ռիսկի խմբի երեխաների բացահայտումն ու պատրոնաժը:
6. Կյանքի դժվարություններ ունեցող երեխաների աջակցությունը:
7. Շեղվող վարքագիծ դրսևորող երեխաների պրոֆիլակտիկան, սոցիալ-մանկավարժական կանխարգելիչ աշխատանքները:
8. Փողոցի երեխաների հայտնաբերումն ու նրանց մանկավարժահոգեբանական աջակցությունը:
9. Բուլինգի ենթարկված աշակերտների բացահայտումը և վերկանգնողական աշխատանքները:
10. Սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական աջակցությունը:
11. ՀՊԶ-ով սահմանված 8 կարողունակությունների վրա հիմնված հիմնական կրթության ապահովումը:
12. Երեխաների իրավունքների պաշտպանությունը:
13. Ծնողական խնամքից զուրկ մնացած դպրոցահասակ երեխաների բացահայտումն ու աջակցությունը:
14. Ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխաների մանկավարժահոգեբանական աջակցությունը:
15. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների բացահայտումը, կարիքի գնահատումը և նրանց կրթության կազմակերպումը:
16. Սովորողների արտադասարանական և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը:
17. Երեխաների համար երկարօրյա ուսուցման/անվաճար և վճարովի հիմունքներով/ կազմակերպումը:
18. Ընտանիքում՝ դասադրոցեսից հետո դասապատրաստում անելու հնարավորություն չունեցող երեխաների աջակցությունը:
19. Հեռավար ուսուցում իրականացնելու հնարավորություն՝ ըստ սահմանված կարգի:
20. Ըստ սահմանված կարգի՝ տնային ուսուցման կազմակերպումը:

21. Արձակուրդներին սովորողների ամառային հանգիստն ու ժամանցը կազմակերպումը և այլն:

ԴԶԾ-ի նպատակներից մեկը զարգացնող միջավայրի ստեղծումն է կրթական գործընթացի բոլոր մասնակիցների՝ սովորողի, սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի, մանկավարժական աշխատողների, խորհրդակցական մարմինների համար, որտեղ բոլոր շահառուների մասնակցային համագործակցությունը հնարավոր է միայն դպրոցի զարգացնող միջավայրի շնորհիվ: Զարգացնող միջավայրը երեք փոխկապակցված բաղադրիչների հանարագումար է՝ անվտանգ և գրավիչ ֆիզիկական միջավայր/ՖՄ/+ նպաստավոր սոցիալական միջավայր/ՍՄ/+ արդյունավետ կրթական միջավայր/ԿՄ/: Տես՝ պատկեր 1:

Պատկեր 1.



Անվտանգ և գրավիչ ֆիզիկական միջավայր՝

1. Անվտանգության նորմերին համապատասխան ուսումնական հաստատության՝ դպրոցի շենք, շինություն:
2. Դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում:
3. Դպրոցի անվտանգության համակարգ:
4. Մաքուր և անվտանգ դպրոցի բակային հատված:
5. Դպրոցամերձ հողամաս, այգի /դեկորատիվ և պտղատու ծառեր/:
6. Դպրոցի նյութատեխնիկական անհրաժեշտ բազայի առկայություն:

7. Ընդարձակ և լուսավոր դասասենյակներ, լաբորատորիաներ, ժամանակակից գրադարան, ընթերցասրահ, բուֆետ, բուժկետ, մարզադահլիճ, հաղիսությունների դահլիճ, ռեսուրս սենյակներ, հանգստի սենյակ, ապաստարան:
8. Դպրոցին կից մարզահրապարակ:
9. Դպրոցին կից խաղահրապարակ:

Նպաստավոր սոցիալական միջավայր՝

1. Սովորողների սոցիալականացման անհրաժեշտ պայմաններ
 1. 1. Հումանիստ մանկավարժների առկայություն:
 1. 2. Անձնակողմնորոշիչ ուսուցում և դաստիարակություն:
 1. 3. Հոգատար, ուշադիր, երեխայի հետ հուզական կապ ունեցող ծնողներ:
 1. 4. Ուսուցիչ-աշակերտ փոխվստահության, փոխադարձ հարգանքի վրա կառուցված համագործակցություն:
 1. 5. Դպրոց-ընտանիք կապի առկայություն:
 1. 6. Բարոյահոգեբանական նպաստավոր միջավայր:
2. Սովորողների սոցիալականացման գործակալների՝ ծնող, ուսուցիչ, դասուղեկ, մանկավարժական աշխատող, վարչական աշխատող ոչ ֆորմալ համագործակցություն:
3. Մանկավարժների սոցիալական և աուտոհոգեբանական կոմպետենցիաների առկայություն:
4. Դպրոցական դեզադապտացիայի կանխարգելում:
5. Մանկավարժահոգեբանական ծառայությունների աջակցող խմբի առկայություն:

Արդյունավետ կրթական միջավայր

1. Դպրոցի կրթական գործընթացն ապահովող օրենսդրական պահանջների կատարում և անհրաժեշտ փաստաթղթավարության առկայություն/ էլեկտրոնային և թղթային/:
2. Մանկավարժական իննովացիաները՝ նորարարություններն ընդունող և կիրառող ուսուցիչներ:
3. Մոտիվացված մանկավարժների առկայություն:
4. Մանկավարժական մտածելակերպ ունեցող ուսուցիչներ և մանկավարժական աշխատողներ:

5. Ուսուցչի անձի համատեղելիությունը մանկավարժական աշխատանքին:
6. ՀՊԶ-ով սահմանված 8 կարողունակությունների հիման վրա կառուցված կրթական գործընթացն ապահովող 8 կարողունակություններ ունեցող ուսուցիչների առկայություն:
7. Ներդրոցական վերահսկողության անընդհատություն:
8. Խորհրդակցական մարմինների արդյունավետ աշխատանք:
9. Հանրակրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների, հանրակրթությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի, օրենսդրական, անհատական իրավական ակտերի, ներքին իրավական ակտերի լուսաբանում՝ կրթական գործընթացի մասնակիցներին:
10. Կրթություն ստանալու մոտիվացիա՝ շարժառիթ ունեցող աշակերտների թվաքանակի աճ, սովորել չցանկացողների թվաքանակի նվազում:

Զարգացնող միջավայրի ստեղծման և ապահովման նախապայմանը դպրոց-համայնք սերտ համագործակցությունն է:

Երևանի զարգացման 2019-2023թթ. հնգամյա ծրագրի 3-րդ գլխի «Մպորտ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ, մշակույթ, երեխաների պաշտպանություն» բաժնում կարևորվում են մանուկների և պատանիների վալեոլոգիական խնդիրները, երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները, իսկ «Ավան վարչական շրջան» բաժնում հիմնախնդիրների շարքում իրենց ուրույն տեղն ու նշանակությունն ունեն դպրոցական հաստատությունների հիմնանորոգման և ընթացիկ նորոգման, գույքի թարմացման, բակերի ոռոգման ցանցերի արդիականացման, նորերի կառուցման, կանաչապատման աշխատանքները, նոր հանգստի գոտիների ստեղծումը, այգիների բարեկարգումը, հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման համար անհրաժեշտ ու բավարար պայմանների ապահովումը:

Վերոնշյալ հիմնախնդիրների լուծման նախատեսված աշխատանքներն են՝

- Կրթությունից դուրս մնացած, առանց ծնողական խնամքի մնացած, ծննդյան վկայական չունեցող, հակասոցիալական վարք դրսևորող երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն
- կրթական համակարգում ընդգրկման և կրթության շարունակության ապահովում,

- փաստաթղթերի ձեռքբերմանն ուղղված բազմամասնագիտական ծառայությունների տրամադում,
- ինամակալության տակ գտնվող երեխաների և նրանց ընտանիքներին հաշվառում և աջակցություն,
- սոցիալական տարբեր խմբերի երեխաներին և նրանց ընտանիքներին քաղաքային կրթամշակութային, սպորտային միջոցառումներին ընդգրկում,
- դպրոցական և նախադպրոցական ուսումնական, մշակութային հաստատությունների հիմնանորոգման և ընթացիկ նորոգման, գույքի թարմացման, բակերի ոռոգման ցանցերի արդիականացման, նորերի կառուցման, կանաչապատման աշխատանքներ,
- նոր հանգստի գոտիների ստեղծման, այգիների բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ,
- հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման համար անհրաժեշտ ու բավարար պայմանների ապահովում,
- կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում, կանաչապատում և ոռոգման ցանցերի ընթացիկ վերանորոգում, ծառատունկերի կազմակերպում,
- վարչական շրջանի բնակչության հանգստի պատշաճ կազմակերպման նպատակով վարչական շրջանում մշակութային միջոցառումների իրականացում,
- դպրոցական ճաշարաններում առողջ սննդի մատակարարում՝ խստիվ պահպանելով անվտանգության նորմերը,
- սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցության տրամադրում:

Ինչպես տեսնում ենք դպրոցի կրթական կարիքներն ուղիղ համեմատական են պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին:

1.2. Կրթական կարիքների նկարագրություն՝ հաստատության ենթակառուցվածքներին համապատասխան:

Գաղտնիք չէ, որ ցանկացած ուսումնական հաստատությունում սովորողների կրթական կարիքների բավարարման գործընթացի, ուսուցիչների աշխատանքի որակի վրա մեծ ազդեցություն են գործում միջավայրային պայմաններն ու գործոնները, իսկ դպրոցի հարմարություններն էլ իրենց ազդեցությունն են թողնում ուսումնական միջավայրի վրա: Ուսումնական հաստատության՝ Երևանի հ.104 հիմնական դպրոցի սովորողների կրթական կարիքների բավարարման, ուսուցիչների արդյունավետ աշխատանքի համար, կրթական գործընթացի բոլոր մասնակիցների համագործակցության համար անհրաժեշտ են դպրոցական հարմարություններ, նպաստավոր պայմաններ դպրոցի բոլոր ենթակառուցվածքներում: Այդ պայմանների առկայությամբ է պայմանավորված ԴԶԾ-ի նպատակներից մեկի՝ զարգացնող միջավայրի երեք փոխկապակցված, փոխլրացնող բաղադրիչների ապահովումը: Դրանք են՝ դպրոցի անվտանգ և գրավիչ ֆիզիկական միջավայրը, նպաստավոր սոցիալական միջավայրը, արդյունավետ կրթական միջավայրը:

Կրթական արդյունքների և դպրոցի հարմարությունների միջև փոխկապակցությունը ուսումնասիրվել է մի շարք հետազոտողների, մասնավորապես, Լեմաստերի կողմից: Ըստ հեղինակի ուսումնասիրությունների, սովորողները նոր հարմարությունների դեպքում ավելի բարձր միավորներ են ձեռք բերում: Լեմաստերը գտնում է, որ դպրոցի հարմարությունները ազդում են նաև ուսուցիչների ակադեմիական աշխատանքի վրա: Դպրոցի ջեռուցումը, օդափոխության և օդորակման հարմարությունները ևս կարևոր են հարմարավետ դասավանդման և ուսուցման համար: Հետազոտողների մեկ այլ խումբը ընդգծել է ուսումնական միջավայրում նախատեսված նստարանների, դասասենյակի չափերի, դռների և պատուհանների դասավորության, էլեկտրականության, ձայնային էֆեկտների, լուսավորման համակարգի, ջերմաստիճանի և օդափոխության, գունավոր և սպիտակ գրատախտակների կարևորությունը ուսուցման գործընթացի համար: Տես Հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական պայմանների մոնիթորինգի արդյունքների զեկույց, Երևան 2019, էջ 13/:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից 2005-2006թթ. մշակված «Երեխային հարմար դպրոց» ձեռնարկն անդրադառնում է այն հիմնական չափանիշներին, որոնց պետք է համապատասխանեն դպրոցները՝ յուրաքանչյուր երեխայի ներուժի լիարժեք բացահայտման նպատակով անհրաժեշտ միջավայր ստեղծելու համար: Ըստ այդ ձեռնարկի՝ երեխաների

գարգացման համար կան երեք տարրեր, որոնք կարևոր են երեխային հարմար դպրոցի դիզայնի առումով. դրանք են՝ անվտանգությունը, առողջությունը, սնուցումը: Ձեռնարկում ներկայացված են այն հիմնարար չափանիշները, որոնց հիման վրա պետք է պլանավորել և նախագծել դպրոցները: Դրանք են՝ դպրոցի կառուցվածքը, ադմինիստրատիվ գրասենյակները, անվտանգ ջուրը, հիգիենայի պայմանները, սանհանգույցները, լույսը, օդը, արևը, փոշին, արտացոլանքը, խոնավությունը, աղմուկը, հոտը, գույները, Էներգիան՝ Էլեկտրաէներգիան կամ այլընտրանքայինը, անվտանգության պայմանները, առողջապահական պայմանները, գրադարանը, կանաչապատումը:

Այս դրույթները ներկայացված են որպես հիմնական, և կան նաև հավելյալ բաղադրիչներ. դրանք են՝ ճկուն տարածքները , դպրոցական գրադարանը և ռեսուրս սենյակը, լոգարանները , դասասենյակներին մոտ հանգստի սենյակը, անհատական սենյակները, բաց տարածքները, խոհանոցը, բուժկետը, աշտպանական միավորը: :/Տես Հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական պայմանների մոնիթորինգի արդյունքների զեկույց, Երևան 2019, էջ 14/:

Երեխաների խմբային աշխատանքի, համագործակցության, արդյունավետ հաղորդակցության և այլ հմտությունների ձևավորման համար կարևոր և անհրաժեշտ գործոններ են դասասենյակներում աշակերտների նստարանների դասավորվածությունը, ՏՀՏ-երի կիրառման հնարավորությունները, դասասենյակների ընդարձակ և լուսավոր լինելը, դասարանական գրադարան ունենալը, զննական պարագաների, ուսումնական նյութերի առկայությունը: Ուսուցիչներին ներկայացվող ժամանակակից պահաջների, շարունակական մասնագիտական առաջընթացի, վերապատրաստումների, ի վերջո ՀՊԶ-ով սահմանված 8 առանցքային կարողունակությունների հիման վրա կրթություն իրականացնելու համար նույնպես անհրաժեշտ են վերոնշյալ պայմանները:

Ստորև ներկայացնենք մեր դպրոցի կրթական կարիքների նկարագրությունը՝ դպրոցի ենթակառուցվածքներին համապատասխան:

Դպրոցն ունի 2 մասնաշենք, 1 մարզադահլճ, 1 հանդիսությունների դահլիճ, 10 առանձնասենյակ՝ երեքը ռեսուրս սենյակներ են, 41 դասասենյակ, 2 առարկայական դասասենյակ/ՆԶՊ, համակարգչային/, Ֆիզիկայի լաբորատորիա, ճաշարան/բուֆետ/, 2 գրադարան, որից մեկում միայն տեղավորված են դասագրքերն ու ուսումնաօժանդակ նյութերը: Դպրոցում կան մարզադահլիճին կից հանդերձարաններ՝ տղաների և աղջիկների, 17 զուգարան, տեխնիկական

նշանակության սենյակներ՝ պահեստներ, և մեկ ինքնաշեն նկուղ, որը ծառայել է որպես նետաձգարան: Դպրոցն ունի լոկալ կաթսայատուն, որն ապահովում է դպրոցի ջեռուցումը ձմեռային սեզոնին: Դպրոցի մանկավարժների արդյունավետ աշխատանքի համար առկա են բավարար պայմաններ՝ դպրոցն ունի անհրաժեշտ նյութատեխնիկական բազա՝ դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ /գրադարան/, դիդակտիկ պարագաներ, սարքավորումներ /լաբորատորիա/, համակարգիչներ, խելացի գրատախտակներ, պրոյեկտոր, տպիչ/համակարգչային սենյակ/, ուսուցչանոց՝ մեթոդական միավորումներին համապատասխան պահարաններով, կահավորված և լուսավոր դասասենյակներ, բաձրախոսներ, խոսափողներ և առակայական դասասենյակներ՝ ՆՁՊ, Շախմատ, Համակարգչային: Աշակերտների կրթական կարիքները բավարարելու համար, նրանց դասապրոցեսին, արտադասարանական դաստիարակության գործընթացին անմիջական և առավելագույն մասնակցության համար վերոնշյալ պայմանները հարմարեցված են նրանց բազմազանությանը: Ուսուցիչների, մանկավարժական աշխատողների աշխատունակությունը հիմնականում կապ ունի նրանց առողջ ապրելակերպի, սնվելու պահանջմունքի բավարարման և առողջության հետ, քանի որ անառողջ, թերսնված մարդու ուղեղի աշխատանքը չի կարող լիարժեք լինել: Մովորողների ուսումնառության որակի վրա էական ազդեցություն կարող են գործել վերոնշյալ գործոնները: Այդ խնդիրների հաղթահարման նպատակով դպրոցում գործում է 75,6 քմ տարածք ունեցող բուֆետ, որի գործունեությունը ծավալում է «Վարդգես Մուսոյան» ԱԶ-ն՝ ըստ ահմանված կարգի և պահանջների: Առողջության պահպանման և անվտանգության տեսանկյունից դպրոցում կան սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան գործող զուգարաններ, խմելու մաքուր ջուր, հակահրդեհային վահանակներ, կրակմարիչներ, ներքին հրդեհաշիջման ջրատար խողովակներ, դպրոցամերձ հողամաս՝ պտղատու և դեկորատիվ ծառերով, դպրոցականների համար՝ ընդարձակ մարզադահլիճ՝ 274,9քմ: Ապաստարանները բացակայում են, քանի որ շենքը նկուղ չունի: Կա 59քմ տարածք ունեցող ինքնաշեն նկուղ, որն ամբողջովին ազատ է՝ պատրաստ շահագործման՝ ըստ անհրաժեշտության: Բուժկետում/14,5քմ/ առկա են առաջին բուժ. օգնության միջոցներ, դեղորայք, բուժզննման համար առաջնային գույք, մեկուսանալու հնարավորություն: Հենաշարժողական խնդիր ունեցողների համար կա զուգարանակոնքով զուգարան, որը բռնաձող չունի և անհարմար տարածքում է: Սրան կանդրադառնանք համապատասխան բաժնում: Դպրոցում բացակայում է թեքահարթակը:

Դասասենյակները և աշխատանքային տարածքները հիմնականում կահավորված են սահմանված նորմերին համապատասխան: /«Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ»-ի մասին ՀՀ առողջապահության նախարարի՝ 28.03.2017թ-ի N12-Ն հրաման:/

«Մատչելի կրթական միջավայր. ֆիզիկական միջավայրի հարմարեցումներ», ՀՄԿ-ի մեթոդական ուղեցույցի 7 բովանդակային մասերում հստակ ներկայացված են ուսումնական հաստատության ֆիզիկական ենթակառուցվածքների, գույքի, կահավորման, սարքավորումների մատչելիության և խելամիտ հարմարեցումների վերաբերյալ տեղեկատվություն, որի ուսումնասիրման և կիրառման դեպքում կշահի դպրոցի զարգացման գործընթացը, մասնավորապես համընդհանուր ներառական կրթությունը, ինչը պետությունը հռչակել է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք, իսկ ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով, կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորշջով սահմանված արդյունքի ապահովումն է: Սահմանման մեջ հստակ երևում է, որ շենքային պայմանները, գույքը, նյութատեխնիկական բազան անմիջականորեն նպաստում են սովորողների կրթական կարիքների բավարարմանը: Երևանի թիվ 104 հիմնական դպրոցի շենք-շինությունների, տարածքի, դասասենյակների, զուգարանների, ռեսուրս-սենյակների, ապաստարանի , ցուցանակների և նշանների մասին վերլուծությունը կներկայացնենք ԴԶԾ-ի 3.1.« Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն» բաժնում:



2. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական դպրոցը մեկ կամ մի քանի ընդհանուր, այդ թվում՝ հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ է: Ուսումնական հաստատությունը, ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի, լինում է՝

- 1) տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ).
- 2) միջին դպրոց (5-9-րդ դասարաններ).
- 3) հիմնական դպրոց (1-9-րդ դասարաններ).
- 4) ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ).
- 5) վարժարան (5-12-րդ դասարաններ).
- 6) միջնակարգ դպրոց (1-12-րդ դասարաններ): ՀՀ Հանրակրթության մասին ՀՀ Օ հոդված 8(5):

«Երևանի հ. 104 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը՝ ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի համարվում է հիմնական դպրոց: Առաքելությունը կազմակերպության գործունեության նկարագիրն է:

«Երևանի հ. 104 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի առաքելությունը

- ✓ իր սովորողներին՝ անկախ նրանց կրթական կարիքների բազմազանության, ազգային հենքի վրա որակյալ, մատչելի տարրական և հիմնական կրթություն տալն է, համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված, մրցունակ, ժամանակի մարտահրավերներին դիմակայելու ունակ, համագործակցող, ստեղծագործող, հետազոտող քննադատական մտածողություն ունեցող, նախաձեռնող, մասնագիտական կողմնորոշում ունեցող քաղաքացիների ձևավորումն է, ովքեր կարող են իրենց կրթությունը շարունակել միջնակարգ դպրոցներում, ավագ

